Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ 75

№ 15

Ա.Ի. ԱՀԱՐՈՆԵԱՆ

# ԵՐԵԽԱՆԵՐԸ

800
107-4

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ՍԱՐՕՐ"
1904

891.99
Ա-42

Ор/-чуг-Гаабалт-ИЧ-16. 997

14 JUN 2005
9 NOV 2010

Ա. Ի. ԱՇԱՐՈՆԵԱՆ

891.99
Ա-42

75

# ԵՐԵԽԱՆԵՐԸ

1001/201

Արտատպած «Մշակ»-ից

232

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ"
1904

14 JUN 2005
․02. 2013
18.390

Дозволено Цензурою. Тифлисъ, 13 Февраля 1904 г.

201 +

Քաղաքի Հայոց Հռիփսիմեան Դպրոց
Էջմ.-ծխակ. (օրիորդաց)

# ԵՐԵԽԱՆԵՐԸ

Ցուրտ ձմեռվայ մի առաւօտ մեծ քաղաքի զառիվայր փողոցից դանդաղ բարձրանում էր մի վեց եօթ տարեկան երեխայ։ Նա կրում էր իր մէջքին մի փոքրիկ կողով, որ պէտք է լիքը և ծանր լինէր, որովհետև մանուկը անդադար սայթաքում էր ստառած ձեան կոկ մակերևոյթի վրա և հազիւ հաւասարակշռութիւնը պահելով՝ քայլում էր։

Արտաքինից խեղճութիւն էր թափւում. մեծ քաղաքի բանւոր ծնողների այն գզգզւած երեխաներից էր երևում, որոնք ծնւած օրից սողում են մութ ու խոնաւ նկուղների աղբերի մէջ, որոնք ամիսը մի անգամ իրանց ուսին քաշ են տալիս ջարդւած կահ-կարասիներ, կեղտոտ անկողիններ՝ մի տնից միւս տունը և որոնց ծանօթ չեն հայրական յարկի, սեփական պարտէզի հետ կապւած քաղցր յիշողութիւններ։ Մանուկը լաւ գիտէր, որ այն

տունը, ուր իրանք ապրում են այժմ, ուրիշինն է, ինչպէս և շատ տներ, ուր եղել են նրանից առաջ։ Ինչ փոյթ, նա այդ մասին քիչ էր մտածում, միայն թէ կարողանար շուտ հասնել, շուտ ազատուել այս անտանելի ցրտից։

Եւ նա շտապում էր, որքան կարող էր, բայց նրա քայլուածքը դժուարացնում էին ցուրտն ու ձիւնը և մանաւանդ կօշիկները, որոնք չափազանց մեծ էին նրա փոքրիկ ոտների համար, ու խեղճ երեխան հազիւ էր քաշ տալիս հին կաշուի և մեխերի այդ բեռը։ Այդ էլ վնաս չունէր, բայց մի կօշիկի կողքը պատռուած էր և ամեն անգամ, երբ մանուկն այն ոտքն առաջ էր ձգում, փոքրիկ թաթի բթամատը, մի ոսկրոտ ու վտիտ մատ, դուրս էր սողում այդ բացուածքից, քսւում էր ձեանը և կրկին ծածկուում, ինչպէս մի վախեցած սողուն, որ գլուխը դուրս է հանում ընից և վտանգ զգալով՝ ներս քաշվում կրկին։ Հօր կօշիկներն էին, որոնք ամբողջ տարիներ քաշ էին եկել բանուորի տանջված ոտներից, նրանց հետ միասին տեսել էին գործարանական կեանքի բոլոր սև կողմերը, տրորել, սղմել էին նրանց կարկատանների չոր ծալքերով և այժմ էլ կախվել էին նոր սերնդի ոտներից, ասես նրանց էլ առաջնորդելու այնտեղ,



ուր հայրն էր տառապել։ Մի քանի շաբաթ առաջ, երբ նրան հագցրին այդ կօշիկներն առաջին անգամ, երբ երեխայի խղճուկ ոտները մէկէն կորան այդ ահագին խորշերի մէջ, ուր հին օրերի ծալքերը, միանգամ ընդ միշտ կազմուած ու քարացած, քերթեցին նրա քնքոյշ մորթին, երբ նա առաջին անգամ փորձեց քայլել և ընկաւ ահագին աղմուկով, նա ցաւով նայեց իր ոտներին, և նրա փոքրիկ գլուխը չէր կարողանում հասկանալ, թէ ինչին են հարկաւոր այդքան մեծ կօշիկները, այդքան ծանր, այդքան չոր։

— Մայրիկ, ախը ուրիշներինը փոքր են ու թեթև։

— Մենք չունենք, զաւակս,—եղաւ պատասխանը։ Ոչ ոք այնպէս խորը կերպով և իսկոյն չէ ըմբռնում խեղճութեան, չքաւորութեան գաղափարը, որքան երեխան։ Մայրն ասաց՝ մենք չունենք, ուրեմն պէտք էր հագնել, պէտք էր քաշ տալ այդ բեռը, պէտք էր կրել նրա պատճառած ցաւը։ Այսօր երեխան զարձեալ ցաւով էր նայում իր ոտներին, բայց էլ չէր զարմանում կօշիկների ծանրութեան, այլանդակութեան վրա. նա այդ դժուարութեանը սովորել էր արդէն, կուզէր միայն, որ իր փոքրիկ վտիտ մատը դուրս չը գար

այն պատուհանից, և աշխատում էր այնպէս քայլել, որ մատը չը բացվի, ձեռնը չը քսվի, բայց այդ նրան չէր աջողվում և ցուրտը կամաց-կամաց ընկճում էր նրան, փոքրիկ, կծկված մարմինը դողդողում էր, խղճուկ ոտներն ու ձեռները կապտել էին։

Երեխան քայլում էր ու մտածում, նրա մէջքի փոքրիկ կողովն էլ, ինչպէս նրա կոշիկները, իր փոքրիկ պատմութիւնն ունէր։ Այդ պատմութիւնը այժմ անցնում էր նրա գլխով իր բոլոր մանրամասնութեամբ։ Ձմեռվան սկիզբից քոյրն էր նրանով հէնց այս ժամին քարածուխ բերում, վառարանը վառում։ Խեղճ քոյր. եղբայրը երբ առաւօտեան զարթնելիս շտապով հաւաքում էր իր գէեստները, վազում էր դէպի վառարանը և այնտեղ կրակի առաջ կծկված հագնվում էր, նրա մտքովն անգամ չէր անցնում, թէ այսքան դժուարութեամբ է ձեռք բերվում ածուխը, թէ այդ հիւանդոտ, միշտ հազացող աղջիկը այսքան ցուրտ է քաշում։ Եւ այդ քոյրը մեռաւ։ Մի առաւօտ, երբ ինքը զարթնեց քոյրն անշարժ պառկած էր իր անկողնում. հայրը չեր երևում,—երեխան նրան համարեա չէր տեսնում,—մայրը կամացուկ լալիս էր, փոքրիկ կողովը դադարկ էր, և վառարանը



չէր վառվում։ Երեխան լաւ յիշում է որ այդ օրը զարթնելուց յետոյ ինքը շատ մրսեց, երբ շորերը հագնում էր, և քրոջ մահը ցաւ պատճառեց մանաւանդ այն պատճառով, որ այդ էր ուրդելք եղել վառարանը վառելուն, բայց նա ամենևին չէր հասկանում, թէ վառարանի կրակը այդպէս դժուար է ձեռք բերվում։ Քրոջ մահից յետոյ մայրն էր գնում ածուխ բերելու և երեխան մոռացաւ քրոջ մահը, որովհետև առաւօտները զարթնելիս նա դարձեալ կարողանում էր իւր շորերը տաք վառարանի առաջ հագնել։ Այդ ժամանակ մտքովն անգամ չէր անցնում, թէ այդ կողովը վերջիվերջոյ իր մէջքին կը նստի։

Բայց երէկ առաւօտ նա զարթնեց և մօրը գտաւ հիւանդ պառկած, կողքին մի փոքրիկ երեխայ, որ չը գիտես ինչու ճչում էր անդադար, սենեակը դարձեալ ցուրտ էր, վառարանը սառը։ Նա շորերը հագաւ դողդողալով։ Մայրն ասաց, որ ինքը հիւանդ է, որ այս պստիկը մի նոր քոյրիկ է, գիշերն ընկել է երկնքից, որ այդ իւր մեռած քոյրն է ուղարկել, որ մեծանայ, նրա փոխարէն գնայ, ածուխ բերի։

— Իսկ մինչև այդ,—ասաց մայրը,—դու պէտք է գնաս ածուխ բերելու։

— Մայրիկ, շո՞ւտ կը մեծանայ իմ քոյրիկը։

— Հա՛, որդի, շուտ կը մեծանայ որ սենեակը տաք լինի, շատ շուտ կը մեծանայ։

Յետոյ մայրն աւելացրեց, որ իւր տղան խելօք է, քաջ տղայ է, որ նա կը լսի մօրը և իսկոյն կերթայ ածուխի. նա խօմ ճանաչում է ածխավաճառի խանութը։

Եւ այսպիսով՝ փոքրիկ կողովը յայտնվեց նրա մէջքին։ Ահա՛ այս էր մտածում երեխան, երբ բարձրանում էր ձիւնոտ զառիվայրով։

Յուրտ էր, բեռը ծանր, ոտների տակ ձիւնը ճռճռում էր, աջ ձեռքը, որով բռնել էր կողովի պարանը, ոսոտիկ կապտել էր. նա դուրս հանեց գրպանից ձախ ձեռքը, բռնեց պարանը և սկսեց փչել սառած ձերքը տաքացնելու համար, բայց նրա խղճուկ շունչն էլ այնքան տաք չէր, ջանքերն ի զուր անցան։

Վիճակը քանի գնում՝ վատանում էր, բայց մայրն ասաց, որ նա խելօք, քաջ տղայ է, նա չի վախենայ ցրտից և կերթայ ածուխի։

Այո նա չէ վախենում ցրտից, բայց ոտի բաց մատը շատ է մորմոքում, աջ ձեռը շատ է կսկծում, գոնէ շուտ բարձրանար ու ազատվեր զառիվայրից, այնուհետև հեշտ է։ Շրթունքները դողդողացին, նա չէր ուզում



լաց լինել, մայրն ասաց, որ նա քաջ է, այդ միայն ցրտից են դողդողում, ահա ներքևի շրթունքը ներս քաշեց և ատամների շարքի մէջ սղմեց. էլ չի դողայ։ Նա բարձրանում է. Տէր Աստուած, այս որքան երկար է ձիւնոտ զառիվայրը. վերելքը վերջ չունի. այս անգամ աչքերը թացացան և միայն երկու կաթիլ աչքերի երկու խորշերից քաշ ընկան, մնացին. այդ էլ ցուրտն է մտածեց երեխան, և թեւով սրբեց ու առաջ քայլեց։

Հազիւ զառիվայրի կատարին հասած, անց ու դարձից կոկված ձեան վրա ոտքը սայթաքեց, նա ընկաւ ծնկների վրա, թէև իսկոյն վերկացաւ, բայց աչքերից արցունքները կաթիլ կաթիլ թափվեցին և նա այս անգամ բարձրաձայն հեկեկաց։ Հենց նոյն րոպէին զառիվայրի վրա յայտնվեց մի ուրիշ երեխայ. նա էլ մի բան ունէր ձեռքին, մի փոքրիկ կոկիկ սահնակ, որով մանուկները ձմեռ ժամանակ սահում են ձիւների վրա դարիվեր փողոցներում։ Հարուստ ծնողների մի բաղդաւոր երեխայ էր, ձեռներին ունէր բրդեա տաք ձեռնոցներ, ոտներին՝ փոքրիկ սիրուն կօշիկներ ռետինէ կրկնակօշիկների մէջ, վրան հաստ՝ տաքուկ վերարկու, մետաքսի պէս նուրբ մազերի երկար գալարուն խոպոպները իջնում

էին նրա մորթէ գլխարկի տակից և պատում պարանոցն և ուսերը։ Նա վազելով, ուրախաձայն աղաղակներով դուրս թռաւ հարևան տնից, բայց տեսնելով այս երեխային, որ կողովի տակ կռացած արտասվում էր, կանգ առաւ ինչպէս քարացած։

Ասում են, որ երեխաներն ամենից հեշտ, ամենից շուտ են իրար հասկանում, որ կեանքի կեղծիքին, ծածկելու, սքողելու արուեստին անծանօթ նրանց կոյս հոգիները, ինչպէս մաքուր հայելիներ են՝ նման հոգիների համար, բայց այսօր այս ձիւնոտ զառիվայրի վրա միևնոյն հասակի, միևնոյն ցեղի, բայց տարբեր դասակարգերի պատկանող այդ երկու երեխաները կանգնել էին դէմ առ դէմ և իրար չէին հասկանում. նրանց սրտերը համը էին փոխադարձաբար։

Կեանքի բոլոր դառնութիւնները, այլանդակող խեղճութիւնը մի կողմից և նրա հեշտութիւններն ու վայելքները միւս կողմից, որպէս երկու անթափանցիկ պարիսպներ կանգնել էին այդ երկու մանուկների մէջ, բաժանելով իրարից դժբաղդութեան և բաղդաւորութեան աշխարհները։ Նրանք երկար նայեցին իրար. երջանիկ, հարուստ երեխան տեսնում էր այդ կեղտոտ, զզզուած երեխայի տանջված



արտաքինի մէջ ինչ որ մի տարօրինակ, մի այլանդակ էակ, մի փոքրիկ գազան, որ կարող էր գուցէ կծել, իսկ արտասվող երեխան նայում էր առաջինին և զարմանում էր, որ օրվայ միևնոյն ժամին, միևնոյն զառիվայրի վրա միևնոյն ցրտի տակ ճիշտ իր հասակակից մի երեխայ կողով չունի, չէ մրսում, որ նրա ոտքի մատը դուրս չէ գալիս կօշիկի ծակից, որ նա չէ սայթաքում, չէ գողում, չէ լալիս։

Ամենից ծանրը, ամենից անտանելին դարձեալ իր կօշիկներն էին. մանուկը նկատեց, որ իւր բաղդաւոր հակառակորդը զարմացած հենց իւր ահագին կօշիկներին է նայում, ինքն էլ աչքի տակով նրա ոտներին նայեց. նրա կօշիկները որքան փոքր էին, որքան սիրուն։ Խեղճ... նա երբէք այդպէս խորը կերպով չէր զգացել իւր կօշիկների բոլոր այլանդակութիւնը, երբէք այդպէս ցաւ չէր զգացել. նոյն իսկ առաջին օրը, երբ նա ընկաւ երեսի վրա, նրա վիշտն այս աստիճան մեծ չեղաւ, որքան այսօր։ Օ՜, ինչպէս կուզէր նա փոքրիկ կօշիկ ունենալ այս ժամին։

Հապա այդ մի կօշիկի պատռուածքը... Գոնէ այդ չը լիներ, մտածեց երեխան, բայց հենց նոյն վայրկեանին անսպասելի կերպով, կարծես դիտմամբ, կապտած մատը դուրս

ցցվեց. նա զգուշութեամբ ներս քաշեց և շարունակեց նայել գիմացինին։

Երկար ժամանակ լուռ էին նրանք։ Առաջինը խօսեց բաղդաւոր երեխան։

— Էյ բլօճ, ինչու՞ ես լալիս։

— Ցուրտ է... էլ չեմ լալիս,—շտապեց աւելացնել երկրորդը, ամաչելով իւր թուլութիւնից իւր հասակակցի առաջ։

Մայրն ասել էր, որ նա քաջ է։

— Ցուրտ է, հէչ էլ ցուրտ չէ...ես չեմ մրրսում,—վրա բերեց առաջինը յոխորտանքով և միևնոյն ժամանակ ցնցեց իւր մազերի երկայն խոպոպները։

Նրանք կրկին լռեցին, կրկին նայում էին իրար, ոտից գլուխ չափելով։

— Ինչու՞ ես տանում ածուխը։

— Քոյրս մեռաւ, մայրս հիւանդ է, տանում եմ, որ պստիկ քոյրս տաքանայ, մեծանայ, յետոյ նա երթա ածուխի։

— Մերը ծառան է բերում։ Գիտես, ես այստեղից դէպի ներքև այնպէս սլլում եմ այնպէս սլլում եմ, որ դու իսկի չես կարող բռնել։

— Ջահաննամը թէ սլլում ես,—պատասխանեց կողովով մանուկը, կարծես զայրացաց, որ նրանց ածուխը ծառան է բերում, մինչ-



գեռ իւր խղճուկ մէջքը ծռված է իւր բեռի տակ, ապա նա մի դառն հայեացք ձգեց իւր հակառակորդի վրա ու առաջ շարժվեց։

Հազիւ մի քանի քայլ արած՝ նա յանկարծ զգաց հենց իր գլխին ձնագնդի մի սաստիկ հարուած. ցաւը խիստ էր, բայց նա էլ չարտասվեց, այլ կոտաղած յետ դարձաւ։ Իւր խօսակիցն էր խփողը, որ իւր սահնակի վրա նստած՝ սլանում էր դէպի ներքև, յետ յետ նայելով ու հռհռալով։

Վշտացած մանուկը վճռեց վազել, բռնել նրան, քաշել պատռել նրա թանգագին, տաք վերարկուն, կախվել նրա երկայն մազերից և քաշ տալ սառած ձեան վրա, որ նա էլ մրսի, մի քանի հարուած տալ գլխին, որ նա էլ լաց լինի, արցունք թափի իր պէս։ Սահնակը շատ արագ էր իջնում, իր կօշիկները շատ էին ծանր, շատ էին մեծ, մէջքի բեռն էլ ճնշում էր, ճնշում, բայց զայրոյթն այնքան մեծ էր, ցրտից, տանջանքից կուտված մաղձը այդ փոքրիկ սրտում այն աստիճան թունոտ էր, որ նա, ամեն բան մոռացած, թափով ձգվեց նրա յետևից, ահագին կօշիկները ճըռճռացին ձեան վրա, նա կրկին սայթաքեց և այս անգամ այնպիսի ուժով փռվեց գետնին, որ կողովը շուռ եկաւ, ածուխը թափվեց,

գէմքը թաղվեց ձեան մէջ, քիթն արնեց, առաջի ատամները խրվեցին շրթունքների մէջ․ հակառակորդին բռնելու էլ հնար չը կար։ Նրա ցաւն ու զայրոյթը գագաթնակէտին հասաւ, բայց նա դարձեալ չարտասվեց, այլ կատաղութիւնից կծոտեց իր վիրաւոր շրթունքները, սղմեց իր կապտած բռունցքը, բարձրացրեց օդի մէջ վեր վեր և ճչաց սպառնալի ձայնով։

— Սպասիր, մենք էլի կը պատահենք։

Նրանք հեռու չեն ապրում իրարից, անշուշտ էլի կը պատահեն։

ՀԱՅ․Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI· 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

գե
ատ
հա
Ն
սա
կա
նե
ՅՐ
Ձա

շ

ՀՀ Ազգային գրադարան
NL0328494

18.3.